

Հավելված  
ՀՀ կառավարության 2022 թվականի  
մարտի 10-ի N 299 - Ն որոշման

«Հավելված N 5  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
ապրիլի 30-ի N 718-Ն որոշման

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ) ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

**Ստուգաթերթ N 5.1  
Աշխատանքային իրավունքի բնագավառում վերահսկողություն**

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ստորաբաժանման անվանումը,  
գտնվելու վայրը

հեռախոսահամարը,

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը  
անունը, հայրանունը

ազգանունը,

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը  
անունը, հայրանունը

ազգանունը,

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ \_\_20\_\_թ. \_\_\_\_\_ ավարտը՝ 20\_\_թ. \_\_\_\_\_

Տնտեսավարող սուբյեկտի անվանումը,

\_\_\_\_\_ Հ Վ Հ Հ 

--	--	--	--	--	--	--	--	--	--

  
Պետական ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

\_\_\_\_\_ Տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները  
(հեռախոսահամարը) \_\_\_\_\_

\_\_\_\_\_ Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ փոխարինող անձի ազգանունը, անունը, հայրանունը  
(հեռախոսահամարը) \_\_\_\_\_

Ստուգման հանձնարարագրի համարը՝ \_\_\_\_\_ տրված՝ \_\_\_\_\_ 20\_\_թ.

Ստուգման նպատակը, պարզաբանման ենթակա հարցերի համարները՝ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_

### ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հ/Հ	Հարցը	Պատասխան
1.	Գործունեության տեսակները (ոլորտները)	
2.	Տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայրը և կոնտակտային տվյալները	
3.	Փաստացի աշխատողների թիվը	
4.	Իգական սեռի աշխատողների թիվը	

5.	Մինչև 18 տարեկան արական սեռի աշխատողների թիվը	
6.	Մինչև 18 տարեկան իգական սեռի աշխատողների թիվը	
7.	Ստուգմամբ ընդգրկված ժամանակահատվածում ընդունված աշխատողների թիվը	
8.	Ստուգմամբ ընդգրկված ժամանակահատվածում ազատված աշխատողների թիվը	
9.	Ստուգմամբ ընդգրկված ժամանակահատվածում սահմանված առավելագույն աշխատավարձ	
10.	Ստուգմամբ ընդգրկված ժամանակահատվածում սահմանված նվազագույն աշխատավարձ	
11.	Ստուգմամբ ընդգրկված ժամանակահատվածում չձևակերպված աշխատողների թիվը	

ՀԱՐՑԱՇԱՐ

Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ իրականացվող ստուգումների

Հ/Հ	Հարց	Հղում նորմատիվ իրավական ակտին	Այո	Ոչ	Չ/Պ	Կշիռ	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություն
1.	Յուրաքանչյուր աշխատող աշխատանքի է ընդունվել կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդված				1	Փաստաթղթային	
2.	Աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ աշխատանքային պայմանագրի մեկ օրինակը հանձնվել է աշխատողին	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մաս, 85-րդ հոդվածի 1-ին մաս				0,3	Փաստաթղթային	
3.	Աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում կամ աշխատանքային պայմանագրում նշված են							
3.1.	անհատական իրավական ակտն ընդունելու, աշխատանքային պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ				0,3	Փաստաթղթային	
3.2.	աշխատողի անունը, ազգանունը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ				0,2	Փաստաթղթային	
3.3.	կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձ գործատուի անունը, ազգանունը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ				0,2	Փաստաթղթային	

		հողվածի 1-ին մասի 3-րդ կետ						
3.4.	կառուցվածքային ստորաբաժանումը (դրա առկայության դեպքում)	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ				0,3	Փաստաթղթային	
3.5.	աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ				0,3	Փաստաթղթային	
3.6.	պաշտոնի անվանումը և (կամ) աշխատանքային գործառույթները	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ				0,5	Փաստաթղթային	
3.7.	հիմնական աշխատավարձի չափը և (կամ) այն որոշելու ձևը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ				0,5	Փաստաթղթային	
3.8.	աշխատողներին սահմանված կարգով տրվող հավելումները, հավելավճարները, լրավճարները	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ				0,5	Փաստաթղթային	
3.9.	անհատական իրավական ակտի կամ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը (անհրաժեշտության դեպքում)	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ				0,2	Փաստաթղթային	
3.10.	փորձաշրջան սահմանելու դեպքում՝ փորձաշրջանի տևողությունը և պայմանները	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ				0,3	Փաստաթղթային	

3.11.	աշխատաժամանակի ռեժիմը՝ աշխատաժամանակի նորմալ տևողություն կամ ոչ լրիվ աշխատաժամանակ կամ աշխատաժամանակի կրճատ տևողություն կամ աշխատաժամանակի գումարային հաշվարկ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ				0,3	Փաստաթղթային	
3.12.	ամենամյա արձակուրդի տեսակը (նվազագույն, լրացուցիչ, երկարացված) և տևողությունը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ մաս				0,3	Փաստաթղթային	
3.13.	իրավական ակտը ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ մաս				0,3	Փաստաթղթային	
3.14.	Համատեղությամբ աշխատանքի դեպքում աշխատանքային պայմանագրում նշված է, որ աշխատանքը կատարվում է համատեղությամբ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ հոդվածի 2-րդ մաս				0,3	Փաստաթղթային	
4.	Պահպանվել է փորձաշրջան սահմանելու արգելքը կամ ժամկետը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 91-րդ հոդվածի 3-րդ մաս, 92-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասեր				0,3	Փաստաթղթային	
5.	Աշխատանքի անցնելուց առաջ գործատուն կամ նրա լիազորած անձը աշխատանքի ընդունվող անձին պատշաճ ծանոթացրել է աշխատանքի պայմաններին, կոլեկտիվ պայմանագրին (դրա առկայության դեպքում), ներքին կարգապահական կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող գործատուի այլ իրավական ակտերին	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածի 2-րդ մաս				0,3	Փաստաթղթային	

6.	Աշխատանքային պայմանագիր կնքելիս գործատուն պահանջել է՝	<p>ՀՀ աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մաս</p> <p>«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր</p>					Փաստաթղթային	
6.1.	անձը հաստատող փաստաթուղթ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ				0,2	Փաստաթղթային	
6.2.	սոցիալական ապահովության քարտ կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշ կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանք	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ				0,2	Փաստաթղթային	
6.3.	կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայական, եթե աշխատանքային օրենսդրությանը համապատասխան՝ աշխատանքը կապված է որոշակի կրթության կամ մասնագիտական պատրաստվածության հետ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ				0,2	Փաստաթղթային	
6.4.	տեղեկանք առողջական վիճակի մասին (սանիտարական գրքույկ), եթե աշխատանքային պայմանագիրը կնքվում է այնպիսի աշխատանքների համար, որոնք պահանջում են սկզբնական և պարբերական բժշկական զննություն, ինչպես նաև մինչև տասնութ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ				0,5	Փաստաթղթային	

	տարեկան քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելու ժամանակ							
6.5.	ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի կամ խնամակալի գրավոր համաձայնությունը, եթե աշխատանքի է ընդունվում մինչև տասնվեց տարեկան անչափահաս քաղաքացին	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ				0.3	Փաստաթղթային	
6.6.	կացության կարգավիճակի և (կամ) աշխատանքի թույլտվության վերաբերյալ փաստաթուղթ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ  «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր				0,5	Փաստաթղթային	
7.	Աշխատանքի ընդունման հայտարարություններում (մրցույթներում) և աշխատանքային հարաբերությունների իրացման ընթացքում պահպանվել է գործնական հատկանիշներից և մասնագիտական պատրաստվածությունից ու որակավորումից բացի, խտրականության հիմք հանդիսացող որևէ այլ պայման սահմանելու արգելքը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.1-ին հոդվածի 1-ին և 3-րդ մասեր, 89-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ				0,3	Փաստաթղթային	
8.	Գործատուն աշխատողին չի թույլատրել կատարել իր աշխատանքային պարտականությունները և չի վճարել աշխատավարձ օրենքով սահմանված դեպքերում	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 108-րդ հոդված				0,2	Փաստաթղթային	



9.	Որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքվել է, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 95-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասեր				0,5	Փաստաթղթային	
10.	Մինչև 16 տարեկան անձանց հետ կնքվել է ժամանակավոր աշխատանքային պայմանագիր	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մաս				0,3	Փաստաթղթային	
11.	Նույն աշխատողի հետ նույն աշխատանքի համար որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելիս, կամ նույն գործատուի մոտ նույն աշխատանքի համար նույն աշխատողի հետ երկրորդ անգամ աշխատանքային պայմանագիր կնքելիս, որոնց ընդհատումը չի գերազանցում մեկ ամիսը, աշխատանքային պայմանագիրը համարվել է կնքված անորոշ ժամկետով (բացառությամբ ստուգաթերթի 9-րդ կետով նախատեսված դեպքերի)	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 95-րդ հոդվածի 2.1-ին մաս				0,5	Փաստաթղթային	
12.	Գործատուն աշխատանքի էական պայմանները փոփոխել է արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման դեպքում	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մաս				0,8	Փաստաթղթային	
13.	Երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում պահպանվել են աշխատանքի էական պայմանները՝ բացառությամբ պաշտոնի անվանման և (կամ) տարակարգերի	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 1.1-ին մաս				0,3	Փաստաթղթային	

14.	Գործատուն, առանց աշխատողի գրավոր համաձայնության, աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը փոփոխել է միայն օրենքով կամ կոլեկտիվ պայմանագրով աշխատանքի վարձատրության պայմանների փոփոխության դեպքում, որի մասին գործատուն գրավոր ձևով ծանուցել է աշխատողին ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ մինչև նոր պայմանների ուժի մեջ մտնելը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ մաս				0,3	Փաստաթղթային	
15.	Աշխատանքի էական պայմանները փոփոխելիս աշխատողը տեղափոխվել է այնպիսի աշխատանքի, որն առողջական վիճակի բերումով նրան հակացուցված չէ բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի եզրակացությամբ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 4-րդ մաս				0,3	Փաստաթղթային	
16.	Աշխատանքի էական պայմանների փոփոխման դեպքում գործատուն իր մոտ մինչև մեկ տարի աշխատողին ծանուցել է ոչ ուշ, քան 14 օր առաջ, մեկից մինչև հինգ տարի աշխատողին՝ 35 օր առաջ, հինգից մինչև տասը տարի աշխատողին՝ 42 օր առաջ, տասից մինչև տասնհինգ տարի աշխատողին՝ 49 օր առաջ, տասնհինգ տարուց ավելի աշխատողին՝ 60 օր առաջ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մաս, 115-րդ հոդվածի 1-ին մաս				0,3	Փաստաթղթային	
17.	Կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելիս պահպանվել է աշխատանքային պայմանագրի լուծման կարգը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ի մաս				0,3	Փաստաթղթային	
18.	Պահպանվել է գործողության ժամկետը լրանալու պատճառով աշխատանքային պայմանագրի լուծման կարգը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 5-րդ մասեր				0,3	Փաստաթղթային	

19.	Պահպանվել է աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման կարգը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 112-րդ հոդված				0,3	Փաստաթղթային	
20.	Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծվել է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերի առկայության դեպքում	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 113-րդ, 120-122-րդ հոդվածներ				1	Փաստաթղթային	
21.	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան աշխատանք	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մաս				0,3	Փաստաթղթային	
22.	Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելիս պահպանվել են ծանուցման ժամկետները և կարգը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ մասեր				0,4	Փաստաթղթային	
23.	Աշխատանքի էական պայմանների փոփոխման կամ աշխատանքային պայմանագրի լուծման ծանուցման ժամկետները չպահպանելու համար աշխատողին վճարվել է տուժանք	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդված 2-րդ մաս, 195-րդ հոդված				1	Փաստաթղթային	
24.	Աշխատանքային պայմանագրի լուծումը ձևակերպվել է գործատուի ընդունած անհատական իրավական ակտով և այն հանձնվել է աշխատողին ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մաս, 5-րդ հոդվածի 4-րդ մաս				0,3	Փաստաթղթային	

25.	Պահպանվել է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու, ինչպես նաև երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում աշխատանքի էական պայմանները փոփոխելու արգելքը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 1.1-ին մաս, 114-րդ հոդված				0,6	Փաստաթղթային	
26.	Պահպանվել են աշխատողների ներկայացուցչի աշխատանքից ազատման կարգը և երաշխիքները	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 119-րդ հոդված				0,3	Փաստաթղթային	
27.	Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքի էական պայմանները փոփոխվելու, ինչպես նաև պարտադիր ժամկետային գինվորական ծառայության զորակոչվելու հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքերում նախատեսված չափով վճարվել է արձակման նպաստ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 129-րդ հոդված, 195-րդ հոդված				0,3	Փաստաթղթային	
28.	Վերջնահաշվարկի օրը գործատուն աշխատողին վճարել է աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, ամենամյա արձակուրդի չօգտագործված բոլոր օրերի համար հատուցում	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 4-րդ մաս, 112-րդ հոդվածի 1-ին մաս, 130-րդ հոդվածի 1-ին, 1.1-ին, 2-րդ, 2.1-ին մասեր, 170-րդ հոդվածի 2-րդ մաս, 195-րդ հոդված				1.1	Փաստաթղթային	
29.	Աշխատողի ցանկությամբ գործատուն տրամադրել է տեղեկանք աշխատանքային գործառույթների (պարտականությունների), աշխատավարձի, վճարված հարկերի ու պետական սոցիալական ապահովության վճարումների չափի և աշխատանքի գնահատականի վերաբերյալ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ մաս				0,1	Փաստաթղթային	
30.	Աշխատաժամանակի տևողություն							

30.1.	Պահպանվել է շաբաթվա ընթացքում աշխատողների աշխատաժամանակի նորմալ տևողությունը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասեր, ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն, ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1223-Ն որոշումներ				0,4	Փաստաթղթային	
30.2.	Պահպանվել է աշխատողների ամենօրյա աշխատաժամանակի նորմալ տևողությունը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ մասեր, ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշում				0,8	Փաստաթղթային	
30.3.	Պահպանվել է աշխատաժամանակի կրճատ տևողությունը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 140-րդ հոդված				0,8	Փաստաթղթային	
30.4	Օրենքով նախատեսված դեպքերում սահմանվել է ոչ լրիվ աշխատաժամանակ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-2-րդ մասեր				0,8	Փաստաթղթային	
30.5.	Սահմանվել է յուրաքանչյուր աշխատողի աշխատաժամանակի և հանգստի ժամանակի բաշխումը (փոփոխությունները) օրվա, շաբաթվա կամ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նաև ամենօրյա աշխատանքի (հերթափոխի) սկիզբը և ավարտը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մաս				1	Փաստաթղթային	

30.6.	Ստույգ հաշվառվել է յուրաքանչյուր աշխատողի օրական և (կամ) շաբաթական աշխատաժամանակը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մաս				1,3	Փաստաթղթային	
30.7.	Պահպանվել են աշխատաժամանակի գումարային հաշվարկի կիրառման կարգը և սահմանափակումները	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 143-րդ հոդված, 154-րդ հոդված, 155-րդ հոդվածի 4-րդ մաս				0,5	Փաստաթղթային	
30.8.	Աշխատողներն արտաժամյա աշխատանքի են ներգրավվել բացառիկ դեպքերում	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-6-րդ կետեր				0,5	Փաստաթղթային	
30.9.	Պահպանվել են արտաժամյա աշխատանքի ներգրավվման սահմանափակումները	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 144-րդ հոդվածի 3-4-րդ մասեր				0,5	Փաստաթղթային	
30.10.	Պահպանվել է օրական, շաբաթական աշխատաժամանակի առավելագույն տևողությունը՝ ներառյալ արտաժամյա աշխատանքը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մաս				0,8	Փաստաթղթային	
30.11.	Յուրաքանչյուր աշխատողի համար իրար հաջորդող երկու օրվա ընթացքում արտաժամյա աշխատանքի տևողությունը չի գերազանցում 4 ժամը, իսկ պետության պաշտպանության, այդ թվում՝ պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման գործընթացի շրջանակներում, ինչպես նաև տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մաս				0,8	Փաստաթղթային	

	արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների վերացման համար անհրաժեշտ աշխատանքների դեպքում՝ 8 ժամը							
30.12.	Յուրաքանչյուր աշխատողի համար գործատուի պահանջով արտաժամյա աշխատանքի տևողությունը տարվա ընթացքում չի գերազանցում 180 ժամը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մաս				0,5	Փաստաթղթային	
30.13.	Ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերի նախօրյակին աշխատանքային օրվա տևողությունը կրճատվել է մեկ ժամով, բացառությամբ կրճատ և ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով աշխատող աշխատողների	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մաս				0,5	Փաստաթղթային	
30.14.	Պահպանվել է մինչև տասնութ տարեկան անձանց, ինչպես նաև այն աշխատողներին գիշերային աշխատանքում ներգրավելու արգելքը, որոնց գիշերային աշխատանքն արգելված է բժշկական եզրակացությամբ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 148-րդ հոդվածի 3-րդ մաս				0,4	Փաստաթղթային	
30.15.	Հղի կանայք և մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատողները գիշերային աշխատանքի են ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ՝ նախնական բժշկական զննություն անցնելուց և գործատուին բժշկական եզրակացություն ներկայացնելուց հետո	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 148-րդ հոդվածի 4-րդ մաս				0,4	Փաստաթղթային	
31.	Հանգստի ժամանակ							
31.1.	Պահպանվել են հանգստի և սնվելու համար ընդմիջման տրամադրման կարգը և պայմաններ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 152-րդ հոդված				0,3	Փաստաթղթային	
31.2.	Պահպանվել է տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձանց հանգստյան, ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքի ընդգրկելու արգելքը՝	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մաս				0,4	Փաստաթղթային	

	բացառությամբ մարզական և մշակութային միջոցառումներին մասնակցելու դեպքերի							
31.3.	Մինչև տասնութ տարեկան աշխատողներին, որոնց աշխատաժամանակի տևողությունը գերազանցում է 4 ժամը, աշխատաժամանակի ընթացքում տրամադրվել է հանգստի համար լրացուցիչ ընդմիջում՝ նվազագույնը 30 րոպե	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 153-րդ հոդված 2-րդ մաս				0,3	Փաստաթղթային	
31.4.	Տրամադրվել են հատուկ ընդմիջումներ, երբ աշխատանքը կատարվում է պլուս 40 աստիճան ցելսիուսից բարձր կամ մինուս 10 աստիճան ցելսիուսից ցածր օդի ջերմաստիճանային պայմաններում, ինչպես նաև ծանր ֆիզիկական կամ մտավոր և հուզական գերլարված բնույթ կրող կամ առողջության համար բացասական ներգործություն ունեցող վտանգավոր այլ պայմաններում	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 153-րդ հոդված 3-րդ մաս				0,3	Փաստաթղթային	
31.5.	Պահպանվել է աշխատանքային օրերի (հերթափոխերի) միջև ամենօրյա անընդմեջ հանգստի տևողությունը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 154-րդ հոդված				0,6	Փաստաթղթային	
31.6.	Պահպանվել է ամենշաբաթյա անընդմեջ հանգստի տևողությունը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մաս				0,6	Փաստաթղթային	
31.7.	Պահպանվել են աշխատողներին հանգստյան օրերին աշխատանքի ներգրավելու արգելքը և կարգը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածի 6-7-րդ մասեր				0,4	Փաստաթղթային	
31.8.	Պահպանվել է աշխատողներին ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքի ներգրավելու արգելքը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մաս				0,4	Փաստաթղթային	
31.9.	Պահպանվել են ամենամյա արձակուրդի (նվազագույն, լրացուցիչ, երկարացված,	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 159-րդ				0,3	Փաստաթղթային	



	տեղափոխված, երկարաձգված) տրամադրման կարգը և ժամկետները	հոդվածի 1-ին, 2-րդ մասեր, 160-րդ հոդված, 161-րդ հոդվածի 1-ին մաս, 163-րդ, 164-րդ, 166-րդ, 167-րդ, 168-րդ հոդվածներ, ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն և ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշումներ						
31.10.	Սահմանված կարգով աշխատողներին տրամադրվել է նպատակային արձակուրդ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 172-176.1-ին հոդվածներ, 195-րդ հոդված				0,1	Փաստաթղթային	
32.	Աշխատավարձ և այլ վճարումներ							
32.1.	Աշխատողների համար սահմանվել և վճարվել է նվազագույն աշխատավարձի չափից ոչ պակաս աշխատավարձ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 179-րդ հոդված, 180-րդ հոդվածի 1-ին մաս, 189-րդ հոդված, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենք				1,3	Փաստաթղթային	
32.2.	Պահպանվել են աշխատավարձի վճարման ժամկետները և կարգը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 192-րդ հոդված				1,3	Փաստաթղթային	
32.3.	Արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար ժամային դրույքաչափից բացի	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի				0,8	Փաստաթղթային	

	աշխատողին վճարվել է հավելում՝ ժամային դրույքաչափի 50 տոկոսից ոչ պակաս չափով	7-րդ մաս, 84.1-ին հոդված, 184-րդ հոդվածի 1-ին մաս						
32.4.	Գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար ժամային դրույքաչափից բացի աշխատողներին վճարվում է հավելում ոչ պակաս, քան ժամային դրույքաչափի 30 տոկոսի չափով	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 84.1-ին հոդված, 184-րդ հոդվածի 1-ին մաս				0,8	Փաստաթղթային	
32.5.	Ծանր, վնասակար, առանձնապես ծանր և առանձնապես վնասակար աշխատանքները կատարելու համար աշխատողին վճարվում է հավելում	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 84.1-ին, 183-րդ հոդվածներ,  ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 1698-Ն որոշում				0,8	Փաստաթղթային	
32.6.	Հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքի ժամանակացույցով չնախատեսված աշխատանքը կողմերի համաձայնությամբ վարձատրվել է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի առնվազն կրկնակի չափով, կամ աշխատողին մեկ ամսվա ընթացքում տրամադրվել է վճարովի այլ հանգստյան օր, կամ այդ օրն ավելացվել է ամենամյա արձակուրդին	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 185-րդ հոդվածի 1-ին մաս				0,8	Փաստաթղթային	
32.7.	Աշխատանքի ժամանակացույցով՝ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքը վարձատրվել է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի կրկնակի չափով	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 185-րդ հոդվածի 2-րդ մաս				0,8	Փաստաթղթային	

32.8.	Պահպանվել է ոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի ընթացքում աշխատավարձի վճարման կարգը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդված				0,8	Փաստաթղթային	
32.9.	Պահպանվել է ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների չալանավորված տեղափոխման կամ չալանավորված տրամադրման ժամանակահատվածում մինչև տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով մինչև երկու ժամ բացակայող աշխատողի աշխատավարձը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 187.1-ին հոդվածի 2-րդ մաս				0,2	Փաստաթղթային	
32.10.	Աշխատողի աշխատանքի ծավալի ավելացման դեպքում աշխատանքը վարձատրվում է կատարված աշխատանքի ծավալին համապատասխան	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 188-րդ հոդված				0,4	Փաստաթղթային	
32.11.	Ամենամյա արձակուրդի համար հաշվարկվել և աշխատողին է վճարվել միջին աշխատավարձ՝ ամենամյա արձակուրդն սկսելուց ոչ ուշ, քան երեք օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդն սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 169-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասեր, 195-րդ հոդված				0,8	Փաստաթղթային	
32.12.	Վճարված, սակայն չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերը հետագայում օգտագործելու դեպքում, ինչպես նաև երկարաձգված արձակուրդի համար վճարվում է միջին աշխատավարձ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասեր, 195-րդ հոդված				0,8	Փաստաթղթային	
32.13.	Գործատուի մեղքով աշխատավարձի վճարումը օրենսգրքով, կոլեկտիվ պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդված				0,8	Փաստաթղթային	

	ժամկետների խախտումով վճարելու դեպքում աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար աշխատողին վճարվել է տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով							
32.14.	Գործատուի կողմից սովորելու գործուղված աշխատողին ուսումնական արձակուրդի յուրաքանչյուր օրվա համար վճարվում է միջին օրական աշխատավարձից ոչ պակաս չափով	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 195-րդ հոդված, 200-րդ հոդվածի 1-ին մաս				0,8	Փաստաթղթային	
32.15.	Պահպանվել է աշակերտների կամ աշխատանքի ընդունվող անձի մասնագիտական ուսուցման կազմակերպման կարգը, ինչպես նաև վճարել է կրթաթոշակ՝ առնվազն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 201.1-ին հոդվածի 1-ին մաս				0,3	Փաստաթղթային	
30.16.	Լրացուցիչ և հատուկ ընդմիջումների համար վճարվել է միջին աշխատավարձ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդված, 203-րդ հոդված				0,3	Փաստաթղթային	
32.17.	Դաշտային պայմաններում կամ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքների համար հատուցվում են աշխատողների կատարած լրացուցիչ ծախսերը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 205-րդ հոդված  ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 13-ի N 1460-Ն որոշում				0,3	Փաստաթղթային	
32.18.	Պահպանվել են գործուղման մեկնած աշխատողների երաշխիքները և վճարվել են հատուցումները	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 209-րդ հոդվածի 1-2-րդ մասեր  ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշում				0,4	Փաստաթղթային	

32.19.	Աշխատավարձից պահումները կատարվել են օրենքով նախատեսված դեպքերում	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-3-րդ մասեր				0,8	Փաստաթղթային	
32.20.	Աշխատավարձը վճարելիս պահումների և գանձումների ընդհանուր չափը չի գերազանցել աշխատողի մեկ ամսվա աշխատավարձի հիսուն տոկոսը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 214-րդ հոդված				0,3	Փաստաթղթային	
32.21.	Պահումներն ու գանձումները կատարելուց հետո աշխատողին վճարվող աշխատավարձը պակաս չէ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափից, բացառությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքեր	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 214-րդ հոդված				0,5	Փաստաթղթային	
33.	Պահպանվել է մինչև տասնութ տարեկան աշխատողի, հղի կանանց և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի գործուղման ուղարկելու կարգը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 3-րդ մաս				0,3	Փաստաթղթային	
34.	Աշխատանքային կարգապահություն							
34.1	Կարգապահական պատասխանատվության է ենթարկվել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 222-րդ հոդված				0,3	Փաստաթղթային	
34.2	Աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար նշանակվել է մեկ կարգապահական տույժ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 225-րդ հոդված				0,3	Փաստաթղթային	
34.3	Մինչև կարգապահական տույժի կիրառումը՝ գործատուն գրավոր կերպով աշխատողից պահանջել է խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 226-րդ հոդվածի 1-ին մաս				0,4	Փաստաթղթային	

34.4	Պահպանվել են կարգապահական տույժի կիրառման ժամկետները	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս, 227-րդ հոդված			0,5	Փաստաթղթային	
35.	Պահպանվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում մինչև տասնութ տարեկան անձանց աշխատանքի ներգրավելու արգելքը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 257-րդ հոդված, «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» N 2308-Ն որոշում			0,8	Փաստաթղթային	
36.	Պահպանվել է հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում ներգրավելու արգելքը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մաս, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2308-Ն որոշում			0,4	Փաստաթղթային	

		ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 1698-Ն որոշում						
37.	Հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կինը բժշկական հետազոտություն անցնելու համար ազատվել է աշխատանքային պարտականությունների կատարումից՝ պահպանելով միջին աշխատավարձը	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ, 195-րդ հոդված				0,4	Փաստաթղթային	
38.	Երեխային կրծքով կերակրող կնոջը մինչև երեխայի մեկուկես տարին լրանալը, երեխային կերակրելու համար յուրաքանչյուր երեք ժամը մեկ տրամադրվել է լրացուցիչ ընդմիջում՝ կես ժամից ոչ պակաս տևողությամբ՝ միջին ժամային աշխատավարձի պահպանմամբ	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 258-րդ հոդվածի 5-րդ, 195-րդ հոդված				0,4	Փաստաթղթային	

1.	<Այո> - առկա է, համապատասխանում է նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, պահպանված են նորմատիվ իրավական ակտերի պահանջները	V		
2.	<Ոչ> - բացակայում է, չի համապատասխանում, չի բավարարում նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, առկա են խախտումներ		V	
3.	<Չ/Պ> - Չի պահանջվում			V

**Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝**

1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրք
2. 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք
3. 2003 թվականի դեկտեմբերի 17-ի «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենք

4. ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշում
5. ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1223-Ն որոշում
6. ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշում
7. ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշում
8. ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 1698-Ն որոշում
9. ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 13-ի N 1460-Ն որոշում
10. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշում
11. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2308-Ն որոշում

Տեսչական մարմնի ծառայող՝

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

Տնտեսավարող՝

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ